
**ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՂԵՌՆԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

ՎԱՐԴՈՒՄՅԱՆ Գ. Դ.

Հայոց ցեղասպանության տարաբնույթ դրսևորումների թվում հույժ կարևոր է մշակույթի եղեռնը, քանզի դրա հետևանքները ժամանակի ընթացքում իրենց առավել են զգացնել տալիս, և հատկապես՝ ազգային ինքնության համապատկերում: Ցեղասպանագիտության մեջ հայտնի է «ազգային-մշակութային եղեռն» հասկացությունը, որը բնութագրում է որևէ ժողովրդի կամ էթնիկ խմբի մշակույթը ոչնչացնելու նպատակով իրականացվող միջոցառումները և գործողությունները, ինչպես նաև՝ պատմամշակութային հուշարձանների, նյութական և հոգևոր արժեքների յուրացումը:

Ըստ իրավագետ Ռաֆայել Լեմկինի՝ ցեղասպանությունը ոչ միայն ազգային կամ կրոնական խմբի վերացումն է նրա ֆիզիկական բնաջնջման, այլև նրա ազգային-հոգևոր մշակույթի ոչնչացման միջոցով¹, և սա համարվում է մարդկության դեմ իրականացված ոճիր: Հայտնի ցեղասպանագետ Բարայել Չարնին մշակութային եղեռնը բնութագրում է *ethnocide* (էթնոցիդ)՝ «ազգասպանություն» հասկացությամբ, որն էլ, իր հերթին, բաժանում է մի շարք խմբերի՝ ա/ կենսաբանական կամ ֆիզիկական (*biological or physical ethnocide*), բ/ տնտեսական (*economic ethnocide*), գ/ լեզվական (*linguicide*), դ/ կրոնական և հոգևոր (*religious and spiritual ethnocide*), ե/ սոցիալական (*social ethnocide*)²:

Հայ բնակչության զանգվածային կոտորածների ու տեղահանության տարիներին երիտթուրքերի կառավարությունը ձգտել է ոչնչացնել ոչ միայն հայ ցեղը³, այլև հայկական մշակույթի նյութական ու հոգևոր վկայությունները: Ջարդարարները ղեկավարվել են Թալեաթի՝ Հալեպի տեղահանության գործերով կոմիտեին ուղղած հրահանգով՝ «ամեն կերպ ջանալ ոչնչացնել բուն «Հայաստան» անվանումը Թուրքիայում»⁴: Ուսումնասիրողները շարունակաբար անդրադարձել են մշակույթի եղեռնի խնդիրներին, հատկապես եկեղեցիների ավերման, մատյանների և

¹ **Lemkin R.**, *Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation - Analysis of Government - Proposals for Redress*, Washington, D.C., 1944, p. 79-95.

² **Charny I.**, *Encyclopedia of Genocide* (publ. by Abc-Clio Inc., 1999), vol. 1, p. 9 (http://www.abebooks.com/Encyclopedia-Genocide-Volume-1-2Charny/39292142_04/bd).

³ Հայոց ցեղասպանության նախապատմության ու կազմակերպման մասին տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, *Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920)*, Ե., 2009:

⁴ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 1991, էջ 562:

ձեռագրերի ոչնչացման հարցերին՝ այդ կորուստները համարելով ողջ համաշխարհային քաղաքակրթությանը հասցված վնաս⁵:

Թուրքագետ Ա. Հովհաննիսյանը մշակույթի եղեռնի կապակցությամբ այսպես է բնութագրում թուրքական կառավարության կողմից վարվող քաղաքականությունը. «Բազմաթիվ փաստերի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ Արևմտյան Հայաստանում հայոց մշակույթի ոչնչացումը Հայկական հարցի՝ երիտթուրքերի ծրագրած «լուծման» մի մասն էր», որի իրականացման համար վարվում էր հայոց տեղաբնիկության և մշտագոյության նյութական վկայությունների նպատակասլաց վերացման պետական քաղաքականություն⁶:

«Ազգային-մշակութային եղեռն» հասկացությունը դեռևս չի մտել Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի («The Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide»⁷) բնագրի մեջ: Այն դեպքում, երբ մշակույթի ոչնչացումը խորը հետք է թողնում ժողովրդի կյանքում՝ որոշ բաներ կորսվում կամ մոռացվում են, շատ բաներ էլ պահպանվում ազգային հիշողության մեջ՝ այս կամ այն չափի ազդեցություն թողնելով նաև էթնիկ ինքնության վրա⁸: Խոսքը վերաբերում է ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր մշակույթին, և քաղաքակրթական արժեքներին առհասարակ, որոնց ոչնչացումը կարելի է անվանել «մշակութասպանություն»: Դրանցից մի քանիսի քննությունը հարկ է սկսել մշակույթի ամենակարևոր ոլորտներից մեկից՝ լեզվից, որն ազգային ինքնության առավել բնութագրիչ գործոնն է: Հայտնի է, որ Արևմտյան Հայաստանի շատ գավառներում արգելվում էր հայերեն խոսել, խոսողին սպառնում էր սեփական լեզվից զրկվելու պատիժը: Դա էր պատճառը, որ Կուտինայում (Քյոթահիա) ծնված Կոմիտասը մինչև

⁵ Սաֆրաստյան Ա. Խ., Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի Արդարադատության և դավանանքների մինիստրություն ներկայացված եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիքները (1912-1913 թթ.) (Էջմիածին, 1965, № 1); Քոլանջյան Ս., Մեր ձեռագրական կորուստները (Էջմիածին, 1965, № 2-7, 1966, № 8-10, 1967, № 5-6):

⁶ Hovhannisyann A., *Cultural Genocide*, p. 115-123 (Հարք, № 1, Ե., 2006, էջ 123, հայ. անվիճակում):

⁷ Տե՛ս <https://treaties.un.org/doc/Publication/UNTS/Volume%2078/volume-78-I-1021-English.pdf>

⁸ «Էթնիկ կամ ազգային ինքնություն» հասկացությունը բխում է «ազգ» հասկացությունից՝ ինքնության գիտակցություն ունեցող այն հանրությունից, որը ճանաչում է նույն հայրենիքը, խոսում նույն լեզվով և հետապնդում նույն նպատակները: Որն է ազգի, էթնոսի ինքնությունը պայմանավորված է նրա անցած պատմական ճանապարհով, ստեղծած քաղաքակրթական արժեքների համակարգով, ներկա իրավիճակով ու ապագայի ընդհանուր ձգտումներով, և այս ամենի մեջ գլխավոր դերը պատկանում է մշակույթին:

որոշակի տարիք հայերեն չգիտեր⁹։ Եվ, իհարկե, Սողոմոնը միակ հայը չէր, որն իր հայրենիքում հայերեն չէր խոսում. ուր մայրը կուզեր իր զավակի լեզուն կտրեն...

Ցեղասպանագետները համոզված են, որ մայրենի լեզվով խոսելն արգելելը ևս պետք է որակել որպես ցեղասպանություն, ավելին՝ արդեն վաղուց շրջանառվում է «լեզվասպանություն» բառեզրը։ Թվում է, թե սա անցյալում մնացած եղեռնագործություն է, սակայն դրա հետևանքները իրենց զգացնել են տալիս նաև մեր օրերում. խոսքն արևմտահայերենի և դրա կրողների՝ արևմտահայերի ներկա վիճակի մասին է։

Դիտարկենք խնդիրը։ Նրանք, ովքեր մնացին իրենց հողի վրա կամ ներկայիս Թուրքիայի տարբեր վայրերում են բնակվում, բաժանվում են մի քանի խմբի՝ ըստ ազգային ինքնության։

Ա/ Առաջին խմբին են պատկանում այն հայերը, որոնք գիտեն, որ իրենք հայ են, չեն թաքցնում դա, խոսում են հայերեն, պահպանում են քրիստոնյա հավատքը և ազգային ավանդույթները, որքան հնարավոր է՝ նույնիսկ ազգային գործունեություն են ծավալում։ Այսպիսի հայերի թիվը շատ չէ, քանի որ Թուրքիայում բոլոր քաղաքացիները թուրք են համարվում՝ պարտավոր են իրենց համարել այդպիսին և խոսել թուրքերեն. բնականաբար, սրանց ճշգրիտ քանակը հայտնի չէ, որն է վիճակագրություն չի արվել։ Հրանտ Դինքը դարձավ այս խմբի խորհրդանիշը՝ իր գործունեությամբ ցույց տալով, որ հայը շատ անելիք ունի իր կորուսյալ հայրենիքի համար, իսկ իր գոհվելով նոր էջ բացեց Թուրքիայում ապրող հայերի (և ոչ միայն հայերի) կյանքում։ Հայերի մեջ արթնացավ էթնիկ հիշողությունը, իսկ ոչ հայերի մեջ՝ մարդկային խիղճը, և, որպես հետևանք, մի քանի օր Ստամբուլի ողջ առաջադեմ հասարակությունը հայտարարում էր՝ «Ես Հրանտ Դինք եմ», «Ես հայ եմ»։ Նման համերաշխ այլափոխությունը տեղի ունեցավ շնորհիվ Դինքի այն հայտնի համոզման, որ «հայ-թուրքական հարաբերություններն անհրաժեշտ է դուրս բերել 1915-ի խորություն ունեցող ջրհորից»¹⁰։

Բ/ Երկրորդ խմբի հայերը գիտեն իրենց էթնիկ պատկանելության մասին, բայց թաքցնում են, քանզի դեռ չի անցել եղեռնի վախը, որը փոխանցվում է սերնդեսերունդ։ Սրանք ծպտյալ հայերն են, որոնց մի մասը ծածուկ խոսում է

⁹ Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոսի հրահանգով Արևմտյան Հայաստանի գավառներ եկած Գևորգ վրդ. Դերձակյանը Քյոթահիայից մի որբ աշակերտի (20 երեխաների միջև վիճակահանությամբ)՝ 12-ամյա Սողոմոնին բերել է Էջմիածին, որտեղ էլ պարզվել է, որ տղան հայերեն չգիտե։ Եվ երբ կաթողիկոսն ասել է, որ տղան այդտեղ անելիք չունի, Սողոմոնը պատասխանել է, թե եկել է սովորելու և երգել է «Լույս զվարթ»-ը։ Երգելիս նկատել է, թե ինչպես կաթողիկոսի աչքերից արցունքներ են գլորվում... (Կոմիտասի մասին տե՛ս Գասպարյան Ս., Աթայան Ռ., Կոմիտաս. կյանքը, գործունեությունը, ստեղծագործությունը, Ե., 1961; Աթայան Ռ., Գյոդակյան Գ., Կոմիտասական, հ. 1, Ե., 1969; Գասպարյան Գ., Կոմիտաս վարդապետ (1869-1935), Ե., 2009)։

¹⁰ Հրանտ Դինք. նա, ով փոխեց Թուրքիան. <http://blog.liberal.am/index.php/hy/>

հայերեն, շատերն էլ չեն խոսում, քանի որ կամ չգիտեն լեզուն, կամ մինչև հիմա էլ վախենում են իրենց ազգային պատկանելությունն ի հայտ բերելուց: Մրանց սերունդները, շատ հավանական է՝ ժամանակի ընթացքում մոռանան մայրենին, լրիվ թուրքալեզու դառնան և կորցնեն ազգային ինքնությունը: Նման էլքը սպառնում է այն դեպքում, եթե ցեղասպանության հարցն առաջընթաց չունենա: Այս խմբին պատկանողների քանակը նույնպես հայտնի չէ՝ հասկանալի պատճառներով, սակայն դժվար չէ ենթադրել, որ դրանք մեծ թիվ են կազմում:

Գ/ Երրորդ խմբում այն հայերն են, որոնք չգիտեն, որ իրենք հայ են, և սրանք նույնպես տարբերակված են՝ էթնիկ հայեր և խառնածիններ, որոնք, ինչ-ինչ հանգամանքների բերումով, իմանալով հայկական արյուն ունենալու փաստը, տարբեր կերպ են արձագանքում այդ նորությանը: Օրինակ՝ Հրանտ Դինքի փաստաբան Ֆեթիյե Չեթինի մտքով անգամ չէր անցնում, որ իր մեջ հայկական արյուն կա, քանի դեռ իր տատն օր ծերության թոռնուհուն չէր խոստովանել իր հայ լինելը և պատմել կոտորածների մասին, ինչից հետո Ֆեթիյեն գրեց «Մեծ մայրս» վիպակը՝ խորապես ցնցված ու տպավորված տատի պատմածներից¹¹:

Վերջին ժամանակներս, հատկապես Դինքի սպանությունից հետո, երբ ցուցարարները «բոլորը Դինք էին», Թուրքիայի շատ քաղաքացիներ սկսել են հետաքրքրվել իրենց արմատներով ու հայկական հետք փնտրել: Իրենց հայկական ինքնությունն իմացող շատերն էլ ցանկություն են հայտնում քրիստոնեական դավանանքին վերադառնալու, սակայն թուրքական կառավարությունը զանազան խոչընդոտներ է հարուցում՝ նրանց այդ ձգտումից հետ պահելու համար: Թե այս գործընթացը ինչ դրսևորումներ կունենա, ցույց կտան ժամանակը և հանգամանքները, որոնք Թուրքիայում հիմա ավելի քան բարդ են՝ ներքին ու արտաքին քաղաքական և այլ պատճառներով:

Այս խմբին են պատկանում նաև իրենց հայկական ծագումից անտեղյակ հայերը, որոնց մեջ քիչ չեն հայատյացները, և դրանց ամենավառ օրինակը՝ Թուրքիայի կին խորհրդանիշ Սաբիհա Գյոքչենն է, որն արմատներով հայ էր՝ Խաթուն Սեֆիլջյան անունով, սակայն չգիտեր դրա մասին: Նա Մուսթաֆա Քեմալի որդեգիր զավակներից էր, բազմաթիվ որդեգիրներից ամենասիրելին, որը դարձավ երկրի առաջին օղաչուհին: Նա երկար տարիներ կարևոր դիրք էր զբաղեցնում թուրքական ռազմաօդային ուժերի համակարգում, ճանաչվել է աշխարհի հայտնի 20 օդաչուներից մեկը: 1938 թ. Դերսիմի ալիքների ապստամբության ժամանակ նա օդանավով ռմբակոծել է ապստամբներին, ինչը մեծապես օգնել է թուրքական բանակին՝ վերահսկողության տակ վերցնել բնակավայրը, ձնշել խոռովությունը և իրականացնել

¹¹ Fethiye İetin, *Anneannem, 2004* (My Grandmother: A Memoir, Amazon, 2008); Ֆեթիյե Չեթին, *Մեծ Մայրս*. Հուշագրական վիպակ (հայ. թարգմ. Մելքոնյան Ռ.) Ե., 2006:

ցեղասպանություն: Ժամանակի թուրքական մամուլը բազմիցս մեծ դրվատանքի է արժանացրել «հերոս Աթաթուրքի հերոս դստերը», որը՝ «որպես արժանավոր գավակ, շարունակում էր հոր գործը»¹²:

Վերադառնալով արևմտահայերենի խնդրին՝ նկատենք, որ եղենից մագապուրծ շատ հայեր, որոնք հանգրվան գտան աշխարհի տարբեր երկրներում, լեզուն կենդանի են պահում արդեն մի քանի սերունդ: Խոսքը վերաբերում է հայկական սփյուռքին, որն աշխարհի գրեթե բոլոր երկրներում է և դարձել է առնվազն երկլեզու՝ խոսում է տվյալ երկրի լեզվով ու մայրենիով: Բայց գաղտնիք չէ, որ ոչ բոլոր գաղթօջախներում են հայերը խոսում հայերեն, ավելին՝ կարծես օրինաչափ է դարձել այն իրողությունը, որ արժանավայել կյանքի համար առավել բարենպաստ միջավայրում մայրենին ավելի շուտ է դուրս գալիս գործածությունից: Յավոք, սփյուռքահայերի մերօրյա սերունդներն արդեն կամաց-կամաց հեռանում են ազգային լեզվից, քանի որ խոսում են այն երկրի լեզվով, որտեղ ապրում են, և հնարավոր է, որ մեկ-երկու սերունդ հետո այլևս չխոսեն հայերեն: Այդպիսի միջավայրերից են ԱՄՆ-ը, Կանադան, եվրոպական երկրները, ուր վերջին տարիներս շատ հայեր են տեղափոխվում Մերձավոր Արևելքի և, հատկապես, Աֆրիկայի այն երկրներից, որտեղ պատերազմական իրավիճակ է (Լիբանան, Եգիպտոս, Սիրիա և այլն): Այսպիսին է դրությունը արտերկրում:

Հայաստան հայրենադարձված արևմտահայերի սերունդներն էլ արդեն արևելահայերեն են խոսում. աշխատավայրում, սոցիալական մյուս միջավայրերում ծնողներից ժառանգած արևմտահայերենը հետզհետե

¹² Այս ամենը ներկայացնելով՝ թուրքագետ Ռ. Մելքոնյանը գրում է, որ «Ակօս»-ում տպագրված «Մաբհա Գյոքչենի գաղտնիքը» հոդվածի հեղինակներ Հրանտ Դինքի և Տիրան Լոքմազոյանի հենց այդ հրապարակումից հետո Թուրքիայում սկսվեց հալածանքների մի մեծ ալիք, որը հետագայում ավելի բնեղաց Հրանտ Դինքի վրա, որի սպանության դրդապատճառներից մեկն էլ համարվում է գաղտնիքի հրապարակումը: Ռ. Մելքոնյանը կարծում է, որ «Մաբհա Գյոքչենը կամ Խաթուն Մեբիջյանը իր կենսագրությամբ և ռազմա-օդաչուական գործունեությամբ, որքան էլ դառն ու կոպիտ հնչի, համապատասխանում է ենիչերի ձևակերպմանը: Նա վաղ հասակում թուրքացվել ու իսլամացվել է, նրան տվել են ռազմական կրթություն և դաստիարակել «թուրքերի հոր» աղջիկը լինելու հոգեբանությամբ: Ազգային ինքնագիտակցության այն ենթադրյալ առկայծումները, որոնց մասին վկայում են տարբեր աղբյուրներ, միշտ ստորադասվել են թուրքական առաջին կին օդաչուի, այլ խոսքով ասած՝ ենիչերիի կերպարին»: Եվ «...եթե փորձենք դիտարկել Մաբհա Գյոքչենի հայ լինելու մասին հոդվածի տպագրվելուց հետո բարձրացված աղմուկի իրական ենթաշերտերը, ապա կտեսնենք, որ թուրքական խորհրդանիշներից մեկի՝ հայտնի օդաչուի իրական էթնիկ պատկանելության քողագերծումը ուղղակիորեն առնչվում է ժամանակակից թուրքական պետության անվտանգության և գոյության հետ: ...Ստի, կեղծիքի և արյան վրա ստեղծված պետության մեջ կեղծ են նաև խորհրդանիշները» (Մելքոնյան Ռ., Բալամացված հայերի խնդիրների շուրջ. Թուրքիայի իսլամացված հայության խնդրի ուսումնասիրություն, Ե., 2009, էջ 24-27, տե՛ս նաև <https://www.google.am/?gws. andin.am/patmutyun/id/376>).

դառնում է ներքնտանեկան, միջազգակցական շփում-ների լեզու: Եվ գուցե ոչ հետավոր ապագայում արևմտահայերենը կենդանի հաղորդակցության միջոցից աստիճանաբար վերածվի գրքային լեզվի, որով, ճիշտ է, հարուստ գրականություն է ստեղծվել ու պահպանվել, բայց ներկայիս պայմաններում այս լեզուն կրողների թիվն աստիճանաբար նվազում է: Նշանակում է՝ հայոց գրական լեզվի երկու ճյուղերից մեկը վտանգված է, և սա շատ լուրջ իրողություն է:

Եղեռնը որոշակի փոփոխություններ է մտցրել հայ ինքնության և մշակույթի այլ ոլորտներում ևս, մասնավորապես դավանանքի բնագավառում, ընդ որում՝ դավանանքի և լեզվի հարցերը անհնար է առանձին դիտարկել, քանզի դրանք ազգային պատկանելության խաթարման հավասարազոր հետևանքներ են: Հայտնի է, որ մեծ թվով հայեր բռնի դավանափոխ են արվել կամ հարկադրաբար հավատափոխ են եղել, ինչը խախտել է նրանց 1700-ամյա քրիստոնեական ավանդույթը, կենցաղը, նիստ ու կացը: Ինչպես իրավացիորեն նկատում է արևելագետ Ալեքսան Խաչատրյանը՝ «Քրիստոնեությունը հայերի համար ոչ միայն դավանանք էր, այլև աշխարհայացք, ազգային գոյության հիմք: Քրիստոնյա, ընդ որում՝ լուսավորչական, լինելը դիտվել է որպես հայության չափանիշ: Դավանափոխությունը դիտվել է որպես ազգուրացություն և դավաճանություն»¹³: Ասել է, թե՝ հարկադիր կրոնափոխությունը ազգասպանության ևս մի միջոց էր Օսմանյան կայսրությունում դեռևս միջնադարից ի վեր:

Ուսումնասիրողների առանձնահատուկ ուշադրությանն են արժանացել Թուրքիայում հավատափոխ եղած հայերի որոշ էթնիկ ենթախմբեր: Դրանցից են Սև ծովի հարավ-արևելյան ափում ապրող համշենահայերը, Դերսիմի այլնի հայերը, Սասունի հայերը (որոնց մի մասն արաբացել է) և այլք: Հատկապես համշենահայերի նկատմամբ վերջին ժամանակներս նկատելիորեն աշխուժացել է հետաքրքրությունը՝ տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ տեղում ուսումնասիրում են նրանց կենցաղն ու մշակույթը, փորձում կապեր հաստատել համայնքի հետ¹⁴:

Համշենահայերը VIII դ. արաբական հալածանքների պատճառով Վասպուրականի Արտազ գավառը լքած Շապուհ Ամատունի իշխանի Համամ որդու սերունդներն են, որոնք XVIII դ. վերջերին- XIX-ի սկզբներին Օսմանյան Թուրքիայի ներքին քաղաքականության հետևանքով բռնի իսլամացվել են՝ դառնալով սուննի մահմեդականներ: Թեև Համամշենի (Համշեն) բնակիչների սերունդները պահպանել են իրենց ինքնատիպ բարբառը, քաղաքագետ

¹³ Խաչատրյան Ա., Հայերի մահմեդականացումը միջնադարյան Հայաստանում /8-15-րդ դդ./ (Դրան-նամե, 1993, № 1, էջ 26):

¹⁴ Ինչպես, օրինակ, «Չայն համշենական» ամսաթերթի (հրատարակվում է 2004-ից) խմբագիր Մերգեյ Վարդանյանը, թուրքագետ Լուսինե Սահակյանը (հեղինակ է համշենահայերի պատմությունը քննության առնող երկու մենագրության, նաև մշակույթը ներկայացնող տեսանյութերի):

Միխայիլ Աղաջանյանի դիտարկմամբ, ժամանակի ընթացքում նրանք «առավելագույնս հեռացել են իրենց «Էթնովճակութային կենաց ծառի» հայկական էթնոսի արմատներից»¹⁵: Այդուհանդերձ, նա համշենահայերի մշակութային վերածննդի տեսանկյունից դրսևորում է նկատում ներկա փուլում, ավելին, հույս է հայտնում, որ «համշենցիների կրթված ներկայացուցիչներից շատերի՝ իրենց պատմական, լեզվամշակութային ու կրոնական բացառիկության արմատները բացահայտելու ժամանակի հետ խորացող ձգտումը... անխուսափելիորեն կամրացնի հայկական ազգային արմատներին ու հայկական մշակութային-քաղաքական կենսաշխարհին իրենց պատկանելության գիտակցումը»¹⁶:

Էթնիկ ինքնության կարևոր կողմերից է ազգային հոգեբանությունը, որն այս պարագայում նույնպես խաթարված է, քանզի մարդը իրավունք չունի իր կրոնը դավանելու, իր սովորութակարգին հարազատ մնալու, իր ծեսերը (ծննդի, մկրտության, պսակի, հարսանիքի, հուղարկավորման և այլ) քրիստոնեական արարողակարգով կատարելու: Սակայն, ինչպես վկայում է համշենահայերի օրինակը, ազգային ինքնության պահպանումը հնարավոր է նույնիսկ դավանափոխության պարագայում: Մյուս կողմից, բնակ-չության գրանցամատյանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1916-2004 թթ., Թուրքիայում իսլամից պաշտոնապես հրաժարվել է մոտ 2000 քաղաքացի, որոնցից 1340-ը ծագումով հայեր են, որոնք վերընդունել են քրիստոնեությունը: 1970-ականից ի վեր կրոնադարձության դեպքեր գրանցված են Ստամբուլում, Դիարբեքիրում, Ադյամանում, Բաթմանում, Սեբաստիայում, Դերսիմում, Մալաթիայում և այլուր¹⁷:

Ազգային ինքնության առումով հետաքրքիր է Թուրքիայի ալևիների¹⁸ էթնիկ ենթախումբը, որոնց մասին ֆրանսիացի ալևիա-գետ, գրող Էրվան Քերիվելը

¹⁵ Աղաջանյան Մ., Համշենահայեր. հայկական էթնոսի ենթախումբ (www.noravank.am/arm/issues/detail.php?...ID=2390):

¹⁶ Նույն տեղում: Բնչ վերաբերում է քրիստոնյա մնացած համշենահայերին, նրանց մի մասը բնակություն է հաստատել Թուրքիայի այլ վայրերում, մյուս մասը՝ Սև ծովի հյուսիս-արևելյան կովկասյան ափում, մասնավորապես Աբխազիայում, Աջարիայում, ինչպես նաև՝ Ռուսաստանի Կրասնոդարի, Կուբանի երկրամասերում, որտեղ նրանք զգալիորեն պահպանել են իրենց ազգային ինքնությունը: 2002 թ. համառոտագրության մարդահամարի տվյալներով՝ ՌԴ-ում ապրում են 1,5 հազար հեմշիններ կամ հեմշիններ, որոնցից մոտ 1000-ը բնակվում է Կրասնոդարի երկրամասում [համշենահայերի այս խմբի մասին տե՛ս Թորլակյան Բ. Գ. Этнография амшенских армян (Амшенская библиотека. Историко-этнологический сборник, Краснодар, 2002, № 1), Хемшилы (Народы России). Атлас культур и религий, М., 2008]:

¹⁷ Մելքոնյան Ռ., Բալանացված հայերի խնդիրների շուրջ, էջ 28-30:

¹⁸ Հայտնի են նաև Միրիայի ալևիները, որոնք ապրում են Քեսապում, Լաթաքիայում և հայաշատ այլ վայրերում: Նախագահ Բաշար-ալ-Ասադը այս էթնիկ ենթախմբի ներկայացուցիչ է, և երկրի կառավարող վերնախավը՝ այս կրոնական ուղղության հետևորդներ:

գրում է. «ամենաարմատական թուրքական ազգայնականության ջատագովները, ինչպիսին է Հալաչօղլուն, ձգտում են ապացուցել, որ Դերսիմի ալևիները «քրդացած թուրքմեններ» են, հայոց պատրիարքարանի ներկայացուցիչները, հանձին արքեպիսկոպոս Արամ Աթեշյանի, հայտարարում են, որ դրանք «կրոնափոխ հայեր» են, քուրդ ազգայնականների համար դերսիմցիները քուրդ ազգի մի մասնիկն են, որը պայքարում է իր անկախության ու ինքնավարության իրավունքի համար»¹⁹:

Բանավիճելով ազգագրագետ Հր. Խառատյանի առաջադրած որոշ դրույթների հետ՝ Է. Քերիվելը կարծում է, որ դերսիմցի հայերը, որոնք արդեն քանի սերունդ ապրել են ալևիական հավատքով, երբեմն խոսել հայերեն, իսկ ավելի հաճախ՝ զազայերենի ու հայերենի խառնուրդ մի լեզվով, կարող են իրենց կապված զգալ հայկական, զազայական, քրդական կամ թուրքական ինքնությանը, միաժամանակ պահելով հավատքն առ մարդ էակ: Այլ ճանապարհ ընտրեց, ըստ նրա, Դերսիմցի հայերի միությունը՝ խրախուսելով կրոնափոխությունը դեպի հայ առաքելական քրիստոնեություն և հորդորելով մկրտությունը, որը ներառում է անվանափոխությունը (հայկական նոր անվան ձեռք բերումը): «Դա մի ընտրություն է, որի իրավունքն ունի յուրաքանչյուր ոք, սակայն, ի վերջո, այն կզրկի դերսիմցի ալևիներին իրենց բաղադրիչների մի մասից»²⁰: Այսինքն՝ Քերիվելը կարծում է, թե

¹⁹ Տե՛ս <http://repairfuture.net/index.php/hy/identity-other-standpoint-ar/dersim-alevism-a-cross-bred-identity-armenian>: Քերիվելի կարծիքով՝ այս դրույթներից ոչ մեկը բավարար չէ Դերսիմի պատմությունը ճշգրիտ ուսումնասիրելու համար, քանի որ դարերի ընթացքում Դերսիմը մետիսացման տարածք է եղել, որտեղ առաջացել է զանազան էթնիկական ծագումների յուրօրինակ մի համադրություն՝ ալևի բնակչությունը՝ հայեր, Բրանի դայլամիներ, քրդեր ու թուրքմեններ: Դա է պատճառը, որ ֆրանսիացի հետազոտողը իր «Les Fils du Soleil, Arméniens et Alevis du Dersim» («Արևորդիները՝ Դերսիմի հայերն ու ալևիները») աշխատությունում այս բնակիչներին բնութագրել է որպես «դերսիմցի ալևիներ», և ոչ թե «ալևի քրդեր» կամ «ալևի զազաներ» (տե՛ս <http://www.acam-france.org/bibliographie/auteur.php?cle=kerivel-erwan>):

²⁰ Է. Քերիվելի միտքն ավելի լավ հասկանալու համար հարկ է մեջբերել նաև հատված Հայաստանի ֆրանսիական համալսարանում տեղի ունեցած «Ճշմարտությունը մարդու մեջ է, Թուրքիայի ալևիները» գրքի հայերեն թարգմանության (թարգմ. Սիրայյան Վ.) շնորհանդեսի ժամանակ նրա ելույթից. «Ալևիները իրենց մոտուլման չեն համարում, ի տարբերություն թուրքերի՝ ավելի ազատ են և լավ ուժ են այդ երկրի ներկայիս իսլամամետ կառավարության հետ հավասարակշռություն կազմելու համար», և որ հայերն ու ալևիները որոշակի նմանություններ ունեն այն առումով, որ Հայոց ցեղասպանության իրագործումից հետո, երբ Անատոլիան գրկվեց իր հայ զավակներից, թուրքական պետության թիրախում հայտնվեցին հենց ալևիները, որոնք վերջին տասնամյակներին մի քանի կոտորածների են ենթարկվել (Դերսիմում, Մարաշում և այլ վայրերում): Այսինքն՝ հեղինակը կարծում է, որ հայերի ու ալևիների հիմնական նմանությունը այն է, որ երկուսին էլ կոտորել են, ու նույն վայրերում (տե՛ս <http://www.aravot.am/2013/05/16/243971>):

այլակրոնությունից հայկականությանն ու քրիստոնեությանը վերադառնալը կարող է բացասական հետևանքներ ունենալ հայալիների համար:

Հրանտ Խառատյանը, հենվելով ալևիների միջավայրում անցյալի հետազոտողների²¹ և իր ուսումնասիրությունների վրա՝ գրում է. «Հայերի զանգվածային ալևիացումը, ըստ երևույթին, սկսվել է առնվազն XVII դ. և XIX դ. հասել մի աստիճանի, որ ոչ միայն արտաքուստ դժվար էր նրանց տարբերել, այլև ալևիական սոցիալ-մշակութային կյանքը մեծ չափով նման էր հայկականին: Ալևի կոչվող բնակչության զգալի մասը հիանալի հիշում էր իր հայկական ծագումը, ավելին, ընթացքի մեջ էին իրենց հայ մնացած ազգականների հետ դեռևս չխզված կապերը: ...Մինչև 1915 թ. ալևիացած հայերը իրենց ալևի էին համարում, սակայն չէին խուսափում իրենց էթնիկ անցյալից»²²: Իսկ ի՞նչ փոխվեց դրանից հետո: «1915 թ. հայերի գեղասպանությունը կտրուկ փոխեց ալևիների և ալևիացած հայերի՝ հայկական անցյալի նկատմամբ վերաբերմունքը: ...Համոզմունք կար, որ հաջորդ քայլը լինելու է կա՛մ իրենց ալևիական ինքնությունից հրաժարման հարկադրանքը, կա՛մ ալևիական ջարդերը: ...1915 թ. հետո «հայկական անցյալի» մասին խոսակցությունները իսպառ դադարել են»: Շարունակելով, ազգագրագետը գրում է. «Եթե ալևիացած հայերի անցյալը թաքցնելը հնարավոր էր, ապա շատ ավելի դժվար էր թաքցնել 1915 թ. և դրանից հետո Դերսիմում մնացած, մասամբ կրկին ալևիացած, մասամբ քրիստոնյա մնացած հայերի գոյությունը: Այսօրվա Դերսիմում հենց նրանք էլ խոսում են իրենց հայկական ծագման մասին, ինչպես նաև այսօրվա Դերսիմում հայկական ծագմամբ ալևիներ համարվում են միայն XX դ. ալևիացած հայերը: Այս նոր ալևիների ինքնության փնտրտուքը տարբերվում է Դերսիմի ընդհանուր ալևիների ինքնության փնտրտուքից»²³:

Ալևիների հարցին անդրադարձել է նաև Ռ. Մելքոնյանը, որը, հիմնվելով փաստագրական նյութի վրա, տեղեկացնում է, որ Յուսուֆ Հալաչօղլուն 2007 թ. Կեսարիայում կայացած ժողովի ժամանակ հայտարարել է, թե ալևի քրդերն իրականում հավատափոխ հայեր են, որոնք առերես իսլամ են ընդունել և փոխել անունները 1915 թ. «տեղահանությունից» խուսափելու համար՝ հավելելով նաև, որ «պալատական» պատմաբանի պնդումները լուրջ չեն ընկալվում նաև թուրք պատմաբանների, այդ թվում և Թաներ Աքչամի, կողմից: Ռ. Մելքոնյանն ինքը ալևիներին համարում է քրդեր, որոնց (ինչպես

²¹ Անդրանիկ, Ճանապարհորդություն դեպի Տերսիմ, Թիֆլիս, 1900, Հալաջյան Գ., Դերսիմի հայերի ազգագրությունը (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 5, Ե., 1975):

²² Խառատյան Հր., Դերսիմի ալևիների ինքնության ճգնաժամը [Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Հայ ժողովրդական մշակույթ» XVI գիտաժողովի նյութերի ժողովածու), Ե., 2014, էջ 162-164]:

²³ Նույն տեղում, էջ 166:

նաև զագա քրդերի) մոտ, ցեղասպանության ժամանակ ապաստան են գտել հայերը, և հատկապես Դերսիմում, քանի որ պատերազմի մեջ գտնվող օսմանյան բանակը «մեծ վերահսկողություն չի ունեցել այդ տարածքների վրա, ինչն էլ հնարավորություն է տվել տեղացիներին պատսպարել հայերին»²⁴:

Ռ. Մելքոնյանը որպես ծայտյալ (նաև՝ արաբացած) հայերի օրինակ բերում է Սասունում ցեղասպանությունը վերապրած իսլամադավաններին, որոնց մի մասը խոսում է Սասնա բարբառով, շատերը ուխտի են գնում Մարութա սարի գագաթին գտնվող Մբ. Աստվածածին ու Գումբի եկեղեցիներ, ոմանք էլ պնդում են, թե իրենք Սասունցի Դավթի սերնդից են: Եվ այս հայերը վերջին ժամանակներս մեծ ջանքեր են գործադրում հայկական եկեղեցի-ների, գերեզմանատների և այլ մշակութային հուշածանների պահպանության ուղղությամբ²⁵:

Բռնի դավանափոխությունն, ինչպես հայտնի է, ուղեկցվում էր եկեղեցիների վանքերի թալանմամբ ու ավերմամբ, գույքի, ձեռագիր մատյանների ոչնչացմամբ, հայ հոգևորականների կոտորածներով²⁶, իսկ եղեռնից հետո տարածված խոսք էր՝ «մինչև 15 թ. մարդ էին մորթում, հետո՝ հուշարձան»: Փաստորեն, ազգասպանությանը ուղեկցել ու հաջորդել է մշակութասպանությունը, և ինչպես Ա. Հովհաննիսյանն է նկատում՝ «Հետեղեռնյան տարիներին նման գործողությունները հանրապետական Թուրքիայի որդեգրած՝ ցեղասպանության փաստի ժխտման և հայոց մշակույթի կոթողների վերացման քաղաքականության ձևաչափի մեջ են»²⁷:

Վերացվող հուշարձաններից են հայոց բազմադարյան պատմության ընթացքում ստեղծված հոգևոր և աշխարհիկ բնույթի ձեռագիր մատյանները, որոնք մինչև ցեղասպանությունը պահվել են Սսի, Աղանայի, Պոլսի, Եվդոկիայի, Խիզանի, Տարոնի, Կարինի, Սեբաստիայի, Մալաթիայի, Վասպուրականի և Արևմտյան Հայաստանի ու Օսմանյան կայսրության այլ վայրերի վանքերում ու եկեղեցիներում, անհատ մարդկանց մոտ: Կոտորածների և տեղահանության ժամանակ իրենց բնակավայրերը լքող հայերը հաճախ առաջին անհրաժեշտության իրերի փոխարեն իրենց հետ վերցրել են ձեռագիր մատյաններ: Շատ ձեռագրեր պահվել են

²⁴ Այս կարծիքին Ռ. Մելքոնյանը եկել է նաև անձնական դիտարկումների հիմամբ. «Դերսիմցի ալեիների հետ մեր անձնական շփումների արդյունքում տեղեկացել ենք, որ, օրինակ, մինչև այսօր էլ նրանց շրջանում տարածված է մի դարձվածանման միտք՝ «Մեր տան հայր», որը կարելի է ընդունել հայերին իրենց տներում ապաստան տալու ուղղակի վկայություն և հիշողություն» (Մելքոնյան Ռ., նշվ. աշխ., էջ 78-79):

²⁵ Նույն տեղում, էջ 93-100:

²⁶ Արևմտյան Հայաստանի եկեղեցիների մասին տե՛ս Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Կ. Պոլիս, 1913, Ռսկյան Հ., Տարոն-Տուրուբերանի վանքերը, Վենետիկ, 1953:

²⁷ Hovhannisyan A., նշվ. աշխ., էջ 122.

թաքստոցներում, սակայն թուրքերն ու քրդերը հայտնաբերել են ոչնչացրել են դրանց մեծ մասը²⁸։ Դրանց մեջ եղել են եկեղեցական, պատմագիտական, փիլիսոփայական, բնագիտական և այլ բնույթի գործեր, հայկական մանրանկարչության գլուխգործոցներ։ Կորած ձեռագրերի թվում են եղել Կոմիտասի նոտագրած հայկական ժողովրդական շատ երգերի տարբերակներ, մեծաթիվ գիտական աշխատություններ, այդ թվում և հին խազանշանների վերաբերյալ²⁹։ Ներկայիս երաժշտագետների մի ողջ սերունդ փորձում է գտնել խազերի վերծանման բանալին, սակայն վերջնական արդյունքի դեռ չի հասել, և դրա պատճառը մշակութային եղեռնն է³⁰։

Ժամանակակից Թուրքիայում շարունակվում է հայկական ճարտարապետական հուշարձանների ոչնչացումը, որոնք ծրագրված ավերվում, հրետանային զինավարժությունների ժամանակ ուժակոծվում և այլ փորձությունների են ենթարկվում։ Այժմ եղեռնը իրականացվում է նաև հայոց հին ու միջնադարյան հուշարձանները աշխարհին որպես թուրքական մատուցելու միջոցով³¹։ Եվ եթե մինչև վերջերս հայկական մշակութային արժեքները հետևողականորեն ոչնչացվում էին, հիմա դրանք օգտագործվում են տուրիզմում՝ որպես եկամտի անսպառ աղբյուր։ Այս նպատակով նորոգվեց Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին, հեռանկարում է Անիի մայր տաճարի նորոգումը, սակայն սա արվում է ոչ թե բարձրարժեք կոթողները պահպանելու, այլ դրանցից նյութական շահ ունենալու, ինչպես նաև աշխարհին որպես «քաղաքակիրթ» հասարակություն ներկայանալու նպատակով։

Ժամանակակից թուրքական պատմագիտությունն էլ կեղծում է Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը, փորձում «ապացուցել» հայերի՝ Հայկական լեռնաշխարհում ոչ բնիկ՝ եկվոր լինելը։ Նման քաղաքականության մաս է կազմում Արևմտյան Հայաստանի տեղանունները թուրքացնելու գործընթացը, որը սկսվել է դեռևս 1920-ականի վերջերից, երբ այդ նպատակով

²⁸ Հայ և օտարազգի շատ ուսումնասիրողներ նկարագրել են Արևմտյան Հայաստանում, Կիլիկյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում գտնվող հազարավոր ձեռագրեր (տե՛ս **Սրվանձությանց Գ.**, *Հնոց և նորոգ, Կ. Պոլիս, 1874*, **Աճառյան Հ.**, *Յուզակ հայերեն ձեռագրաց Սանասարյան վարժարանի ի Կարին, Վիեննա, 1900*, **Լալաեան Ե.**, *Յուզակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, պր. 1, Թիֆլիս, 1915*)։

²⁹ Քսան տարվա տրևաջան աշխատանքի շնորհիվ Վարդապետը վերծանել էր խազերը [տե՛ս **Կոմիտաս**, *Շարականի խազերի նշանակությունը* (Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., 1941, № 12)]։

³⁰ **Աթայան Ռ.**, *Հայկական խազային նոտագրությունը*, Ե., 1959, նույնի՝ *Армянская средневековая нотопись (Музыка народов Азии и Африки, 2, М., 1973, № 12)*, **Թահմիզյան Ն.**, *Խազագրության արվեստը իր պատմական զարգացման մեջ* (Բանբեր Մատենադարանի, 1977, № 2), **Շահնազարյան Ա.**, *Շարական խազագրեալ*, Ե., 2013։

³¹ **Зулалаян М.** *Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии*, Е., 1970.

ստեղծվեց հատուկ վարչություն³²: Թուրք պատմաբանները ջանում են «հիմնավորել» իրենց հորինած դրույթները, որ Հայաստանը, այսպես կոչված, Արևելյան Անատոլիայում գտնվող մի տարածքի լոկ աշխարհագրական անունն է, որ հայկական մշակութային հուշարձանները հայկական անվանելը ճիշտ չէ, իբր, դրանք ստեղծել են թուրքերը³³: Հայոց պատմության և մշակույթի վրա նման հարձակումները հետապնդում են երկու նպատակ՝ ցույց տալ, որ Արևմտյան Հայաստանը չի եղել հայերի հայրենիքի մի մասը, և չի եղել Հայոց ցեղասպանություն:

Ազգային-մշակութային եղեռնի կամ մշակութասպանության հեռահար նպատակն է հայ ժողովրդի ստվար զանգվածներին կոտորելուց, հայկական տարածքները յուրացնելուց հետո վերացնել կամ սեփականացնել հայ ժողովրդի ստեղծած մշակութային արժեքները, հայկական քաղաքակրթության նյութական ու հոգևոր արտահայտությունները, որպեսզի չմնան «անհետացած» ժողովրդի վկաները³⁴: Մինչդեռ հայոց մշակութային

³² Հայկական տեղանունների թուրքացման մասին տե՛ս **Danielyan E.** *Turkish-Azerbaijani Falsifications of the Armenian Toponyms as an Indication of the Genocidal Policy* (Բանբեր հայագիտության, 2013, № 1, էջ 159-179):

³³ Այս կեղծարարությունների մասին տե՛ս **Զուլալյան Մ.**, Հայոց պատմության խեղաթուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր), Ե., 1995, **Danielyan E.** *Historical Truth Against Turkish-Azerbaijani Falsifications in Information Warfare* (21-st Century, № 1, Yerevan, 2014, p. 104-131).

³⁴ Հայոց ցեղասպանության, դրա հետևանքների, ճանաչման և հատուցման խնդիրների մասին տե՛ս *Геноцид армян в Османской империи /Сборник материалов и документов, под ред. М. Нерсисяна/,* Ե., 1983, *The Armenian Question Today*, Glendale, 1988, **Киракосян Дж.** *Младотурки перед судом истории*, 2 изд., Ե., 1989, *Армянский вопрос /Энциклопедия/,* Ե., 1991, **Dadrian V.** *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Oxford, 1995, *Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива МИД Кайзеровской Германии (сборник),* сост. Микаелян В. А., Ե., 1995, **Միքայելյան Վ.**, Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915-1918 թթ.), ըստ Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվների վավերագրերի, Ե., 2004, **Барсегов Ю. Г.** *Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества /Документы и комментарии/,* т. 1, М., 2003, т. 2, М., 2005, **Hovannisian R.** *The Armenian Genocide: Cultural and Ethical Legacies*, New Brunswick, New Jersey, 2007, **Balakian Gr.** *Armenian Golgotha* /translated by P. Balakian, Ar. Sevag, New York, 2009, **Akcam T.** *The Young Turks' Crime Against Humanity: Against Humanity: The Armenian Genocide and Ethnic in the Cleansing Ottoman Empire*, Princeton, 2012; <http://armenian-genocide100>, **Մարության Ա.**, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Ե., 2014:

արժեքների պահպանության խնդիրները, որ հայ ինքնության անբաժանելի մասն են կազմում, կարևոր նշանակություն ունեն համաշխարհային քաղաքակրթության համար, և անհրաժեշտ է ուղիներ փնտրել ու գտնել դրանք իրենց իրական տերերին վերադարձնելու համար:

ПРОБЛЕМА НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ АРМЯН В КОНТЕКСТЕ КУЛЬТУРНОГО ГЕНОЦИДА

ВАРДУМЯН Г. Д.

Резюме

Культурный геноцид, являя собой уничтожение или присвоение ценностей материальной и духовной культуры народа, оставляет неизгладимый след на его национальной идентичности и в самосознании. Проявлениями культурного геноцида в отношении армянского народа в Османской империи и республиканской Турции стали запрещение родного языка, насильственная исламизация и тюркизация, уничтожение церквей и рукописей, присвоение истории и культуры.

В результате подобных действий сформировались этнические субгруппы хамшенских армян, дерсимских армян алеви, сасунских армян (частично арабизированных) и др. У названных этнических субгрупп прослеживаются процессы трансформации национального самосознания и их последствия в этнической идентичности последующих поколений. Геноцид цивилизационных ценностей в Западной Армении преследовал и продолжает преследовать цель уничтожения всех следов армянской культуры и, тем самым, полного отрицания существования народа на своей исторической земле.

Проблема сохранения этих ценностей, составляющих неотъемлемую часть армянской национальной идентичности, имеет важное значение и для мировой цивилизации.

THE ISSUE OF ARMENIAN NATIONAL IDENTITY
IN THE CONTEXT OF CULTURAL GENOCIDE

G. VARDUMYAN

Abstract

The Armenian Genocide in the Ottoman Empire and the Turkish Republic is characterized by different manifestations, among which a special place occupies cultural genocide – the destruction or appropriation of material and spiritual culture values of the people, the consequences of which have left a deep trace on national identity and self-consciousness of the people. In this respect, such aspects of cultural genocide as the prohibition to speak the native language, forced Islamization and Turkization, destruction of churches and manuscripts, assignment of history and culture of the people, etc. are of great importance. These activities led to the formation of ethnic subgroups of Hamshen Armenians, Dersim Alevi Armenians, Sassoon Armenians (partially Arabized) and many others, among whom the processes of transformation of the national self-consciousness and their implications in the ethnic identity of future generations can be traced.

The genocide of cultural values in Western Armenia has been pursuing the goal of destroying all traces of Armenian culture and, thus, a total denial of the existence of the people on their historical land. Its effects continue to increase during the time, meanwhile, the problems of preservation of these values inherent in the Armenian national identity, are essential for world civilization as well, and there must be sought and found ways to return them to their real owners.